

ներս ի փաղափն Արշակունեաց վանքն՝ ի սուրբ Պրոպասիկե կողմանն», զոր ինքն անձամբ տեսած է միւս հայկական վանքերուն հետ: Ասկէց աւելի բացօթի վկայութիւն չի կրնար ըլլալ, այս պատճառաւ է որ վերեւ յիշուած գիտնական եկեղեցականը շատ իրաւամբ կարծիք կը յայտնէ թէ՝ Յուստինիանոսի Պրոպատիկէ շինած Հիւրանոցին վարչութիւնը յանձնուած էր Պրոպատիկէի կից Արշակունեաց վանքի կրօնաւորներուն (R. B. 1893, էջ 262). կը վկայէ նաեւ 1483ին Ազկէրմանցի Նիկողայոս եպս. Երուսաղէմի ուխտատեղիներու իր ցուցակին մէջ հետեւեալ կերպով. «Պրոպատիկէ աւազանն, որ կոչի եբրայեցերէն սրահ, ուր անգամայոյժն բժշկեցաւ և գերեզմանն Աստուածածնի ծնողաց, Յովակիմայ և Աննայի, և ծնունդն Աստուածածնի»: Նիկողայոս եպս. այս տողերով կարեւոր պարագայ մը մէջ կը բերէ ըսելով որ՝ Աննայի և Յովակիմայ գերեզմանները կը գտնուին Ս. Աննայի եկեղեցւոյն մէջ, թէպէտ ռուս ճանապարհորդ մը՝ վանահայր Դանիէլ (1113) կը վկայէ նոյնը ուրիշներու հետ: Սակայն այս կէտը, հնախօսներուն մէջ, տակաւին վիճելի է:

Երուսաղիմայ Հայոց պատրիարք Գրիգոր Շղթայակիր մեր Ս. Յակոբայ վանքին մէջ, 1728ին ցորենի քարուկիր համբարանոց մը շինել կուտայ, նոյն միջոցներուն, Յովհաննէս եպս. Երուսաղէմացի (Հաննէ), Ս. Յովակիմայ և Աննայի եկեղեցիէն բերուած մարմարեայ բոլորակ խաչքար մը ձեռք կ'անցնէ ու գրել կուտայ հետեւեալ յիշատակարանը. «Ուստի է Յովակիմայ և Աննայի Տանէն, ուր ծնաւ Ս. Աստուածածին»: Նոյն խաչքարին եղերքն ալ սա յիշատակարանը «Կանգնեցաւ Ս. Ուստի Գրիգոր հայրապետին և ամենայն միաբանից որ շինեաց ցորենատուն. թվին ՌՃՀէ=1728» գրելով կը զետեղեն ցորենատան դրան ներսի կողմը: Վերոյիշեալ Յովհաննէս վրդ. իր պատմութեան մէջ (էջ 299) կը գրէ (1727) թէ՝ «ի նոյն կողմն Ս. Աննայի (հարստային կողմը) գտան խցիկի և խճիթի կրօնաւոր կուսանաց . . . և այժմ աւանեմեան աւերի են և ոչ ոք չեն քննարկել ի նոսա:»

Ս. Յակոբայ վանքի միաբան հանգուցեալ Աստուածատուր եպս. Տ. Յովհաննէսեանց իր «Պատմութիւն Ս. Երուսաղիմի» գլուխքին մէջ (էջ 157 Հտր. Ա.), կը գրէ թէ՝ կարգացած է ինքն հայերէն ձեռագիր մատենի մը յիշատակարանին մէջ այս պարբերութիւնը «Դրեցաւ գիրին ի տուն Յովակիմայ և Աննայի», բայց